

Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև **4 ժամ**:

ԴԱՍ 10

ՓԱԽՍԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

[ՄՈՏԻՎԱՅՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ](#)

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)

Նախորդ դասում Ձեզ ներկայացրեցինք

- ապացուցման բեռի բաշխման սկզբունքային կանոնը և այդ կանոնի կիրառման հարաբերական չափորոշիչները,
- ծագման երկրի մասին տեղեկությունների հավաքագրման և գնահատման կանոնները,
- ինչպես նաև պաշտպանության կարիք ունեցող հայցողների իրավունքների երաշխավորման սկզբունքը:

Այս դասում կքննարկենք փախստականի կարգավիճակի բովանդակությունը: Մասնավորապես,

Ցուցումներ



Մինչև 5 րոպե

Ուշադրությամբ կարդացեք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցեք ինքնաստուգիչ հարցերին:



Մինչև 205 րոպե

կանդրադառնանք 1951 թ. Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների ու մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանված երաշխիքների հարաբերակցության հարցին, ինչպես նաև Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների հետ կապված որոշ հիմնախնդիրներին:

1951 թ. Կոնվենցիան փախստականի կարգավիճակ ստացած անձանց համար նախատեսում է մի շարք երաշխիքներ, որոնց մի մասը նաև տարածվում է ապաստան հայցող անձանց վրա: Դրանց մի մասը փախստականների իրավունքի սկզբունքներ են, որոնք արդեն քննարկվել են նախորդ դասերում, [մասնավորապես՝ վտարման արգելքը, չվերադարձելիության սկզբունքը, անօրինական մուտքի ու կացության պատժելիության արգելքը, երկիրը լքելու իրավունքը](#): Ի լրումն դրանց, Կոնվենցիան հատուկ երաշխիքներ է նախատեսում կրոնի, տեղաշարժի ազատության, սեփականության, ոչ քաղաքական և շահույթ չհետապնդող միավորումներ կազմելու, դատական պաշտպանության, աշխատանքի, ձեռնարկատիրական գործունեության, կրթության իրավունքների իրականացման համար, ինչպես նաև սահմանում է մի շարք սոցիալական երաշխիքներ: Ընդհանուր առմամբ Կոնվենցիայի համապատասխան դրույթները լիարժեք ամրագրված են նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում և, ուստի, սույն դասի շրջանակներում չկա դրանց մանրամասն քննարկման անհրաժեշտությունը: Փոխարենը կքննարկենք համապատասխան երաշխիքների հետ կապված որոշ հիմնախնդիրներ: Բացի այդ, այս երաշխիքներն ակնհայտորեն «հատվում» են մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանված երաշխիքների հետ, ինչն անհրաժեշտ է դարձնում դրանց հարաբերակցության քննարկումը:

Դաս 6-ից և դաս 7-ից վերիիջեք այս սկզբունքների բովանդակությունը:

Փախստականների միջազգային իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի հարաբերակցությունը: Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում այն իրավունքներին և արտոնություններին, որոնք դրա շրջանակներից դուրս պետությունները տրամադրում են փախստականներին: Ուստի որևէ դեպքում, երբ մարդու իրավունքների միջազգային իրավունքի (այսուհետ՝ ՄԻՄԻ) նորմերով սահմանվում են իրավունքներ յուրաքանչյուր անձի համար, որոնք ավելի բարենպաստ են, քան Կոնվենցիայով սահմանվածները, գերակայությունը պետք է տրվի ՄԻՄԻ նորմերին¹: Առհասարակ, փախստականների համար Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու երաշխիքները հարկ է դիտարկել ՄԻՄԻ նորմերի համատեքստում²:

«Միևնույն հանգամանքներում»: Կոնվենցիայի մի շարք հոդվածներ պետությանը պարտավորեցնում են որոշակի իրավունքների կամ երաշխիքների մասով փախստականների հանդեպ ցուցաբերել առավել նպաստավոր վերաբերմունք, որը «(միև)նույն հանգամանքներում» ցուցաբերվում է օտարերկրացիներին: Թերևս ցանկացած երկրում մի շարք իրավունքներ (օրինակ՝ աշխատանքի, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքները), որպես կանոն, անձի կողմից կարող են իրականացվել որոշակի պայմաններին բավարարելու պայմանով (օրինակ՝ որոշակի տարիքի հասնելը կամ որոշակի կրթության առկայությունը): Համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի՝ «(միև)նույն հանգամանքներում» եզրը չի ենթադրում այնպիսի պայմաններ բավարարելու պահանջ, որոնք չեն կարող բավարարվել փախստականի

¹ A. Edwards, “Human Rights, Refugees, and the Right “To Enjoy” Asylum”, *International Journal of Refugee Law*, vol. 17, no. 2 (2005), pp. 293–330, p. 306.
² OHCHR, Fact Sheet No. 20, Human Rights and Refugees, July 1993, No. 20, available at: <http://www.ohchr.org/Documents/Publications/FactSheet20en.pdf> [accessed 29.06.2016], p. 6.

կողմից: Այսպես, եթե որոշակի աշխատանք կատարելու (կամ որոշակի գործունեության արտոնագիր ստանալու) համար որպես նախապայման անհրաժեշտ է որոշակի կրթության կամ փորձի առկայություն, ապա փախստականից չի կարելի պահանջել դրանք հաստատող պաշտոնական փաստաթղթեր (դիպլոմ, աշխատանքային գրքույկ), քանի որ փախուստի դիմելուց փախստականները հաճախ չեն կարողանում իրենց հետ վերցնել նման փաստաթղթեր: **Ուստի, փախստականին հարկ է հնարավորություն ընձեռել այլ ապացույցների միջոցով հիմնավորել փորձի կամ կրթության առկայությունը (կամ այլ կիրառելի պահանջի բավարարումը)**³:

Ներկայացրեք ապացույցի տեսակներ, որոնց միջոցով հնարավոր է հիմնավորել փորձի կամ կրթության առկայությունը:

Փոխադարձության սկզբունքը և «նույն վերաբերմունքը, ինչ օտարերկրացիներին»: Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քանի դեռ ավելի նպաստավոր վերաբերմունք նախատեսված չէ Կոնվենցիայի այլ դրույթներով, պետությունը փախստականների հանդեպ ցուցաբերում է նույն վերաբերմունքը, ինչ օտարերկրացիներին: Ակնհայտ է, որ եթե պետությունը պարտավոր է օտարերկրացիների հանդեպ ցուցաբերել որոշակի վերաբերմունք, սակայն փաստացի դա չի ցուցաբերում, նա իր այդ թերացումը չի կարող օգտագործել փախստականների հանդեպ նմանօրինակ վերաբերմունք չցուցաբերելը հիմնավորելու համար⁴:

Նույն հոդվածի 2-ր մասը սահմանում է, որ եռամյա բնակությունից հետո բոլոր փախստականներն ազատվում են օրենսդրորեն սահմանված փոխադարձության պահանջից: Այս համատեքստում ակնհայտ է, որ 1-ին մասում «օտարերկրացիներ» եզրն ինքնաբերաբար չի վերաբերում այն

³ UNHCR Commentary on the Refugee Convention 1951 Articles 2-11, 13-37, Published by the Division of International Protection of the United Nations High Commissioner for Refugees, 1997, p. 14.
⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

օտարերկրացիներին, որոնք, համաձայն փոխադարձության սկզբունքի, օգտվում են որոշակի արտոնյալ վերաբերմունքից:

Վերադառնալով քննարկվող հոդվածի 2-րդ մասին՝ հարկ է հաշվի առնել երկու հանգամանք: Առաջին՝ ապաստանի երկրում երեք տարվա բնակության պահանջը չի ենթադրում անընդհատ բնակություն: Կարճատև այցերը երրորդ երկրներ չեն հանգեցնում այս ժամկետի հաշվարկի ընդհատմանը, քանի դեռ անձի մշտական բնակության վայր շարունակում է մնալ ապաստանի երկիրը: Երկրորդ՝ փոխադարձության պահանջը չկիրառելը չի ենթադրում փոխադարձության սկզբունքի իսպառ վերացում: Այն դեպքերում, երբ փոխադարձության սկզբունքի կիրառման արդյունքում օտարերկրացիների զգալի մասն օգտվում է խնդրո առարկա երաշխիքից կամ արտոնությունից, քանի որ պետություններից շատերը նույնպես կիրառում են նման երաշխիք կամ արտոնություն, ապա փախստականները նույնպես պետք է օգտվեն դրանցից՝ անկախ փոխադարձությունից: Սակայն այն դեպքերում, երբ երաշխիքը կամ արտոնությունը փոխադարձության սկզբունքով տրամադրվում է բացառապես այն օտարերկրյա պետությունների քաղաքացիներին, որոնց հետ ապաստանի երկիրն ունի առավել սերտ կապեր (մասնավորապես՝ «ազգերի առավել բարենպաստության մոտեցման» շրջանակներում)⁵, փախստականները չեն կարող հավակնել նման երաշխիքի կամ արտոնության Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա⁶:

⁵ Հարկ է հաշվի առնել, որ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) մի շարք առանցքային պայմանագրեր պահանջում են ազգերի առավել բարենպաստության մոտեցման շրջանակներում որևէ երկրի քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց տրամադրվող որևէ առավելությունը կամ արտոնությունն ինքնաբերաբար տրամադրել ԱՀԿ բոլոր անդամ պետությունների քաղաքացիներին ու իրավաբանական անձանց: Ուստի նման առավելությունը կամ արտոնությունը չի համարվի բացառիկ և պետք է տրամադրվի նաև փախստականներին:

⁶ UNHCR Commentary on the Refugee Convention 1951 Articles 2-11, 13-37, Published by the Division of International Protection of the United Nations High Commissioner for Refugees, 1997, p. 17.

Երեխաների կրոնական ազատ դաստիարակություն:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պարտավոր են «իրենց տարածքներում կրոնական ազատության և զավակների կրոնական դաստիարակության ազատության հարցում փախստականների հանդեպ պետք է ցուցաբերեն **առնվազն** այնքան բարեհաճ վերաբերմունք, որքան ցուցաբերում են իրենց քաղաքացիների նկատմամբ»:

Այս դրույթում «առնվազն» եզրույթը ենթադրում է, որ որոշ դեպքերում պետությունները պետք է փախստականներին ապահովեն կրոնական դաստիարակության ավելի մեծ ազատություն, քան նույնիսկ սեփական քաղաքացիներին:

Մասնավորապես, ըստ Կոնվենցիայի *travaux préparatoires*-ի, այն դեպքերում, երբ պետությունում առկա է պետական կրոն, որն ուսուցանվում է դպրոցներում, այլ կրոնի ներկայացուցիչ փախստականները պետք է հնարավորություն ունենան իրենց երեխաներին ազատել այդպիսի դասերին հաճախելուց⁷: Միաժամանակ, «իրենց տարածքում գտնվող» արտահայտությունը, ըստ Կոնվենցիայի մեկնաբանությունների, ենթադրում է, որ քննարկվող դրույթը վերաբերում է բոլոր փախստականներին՝ անկախ տվյալ երկրում նրանց կարգավիճակ տրամադրելու փաստից⁸:

Բերեք փաստարկներ այս դրույթի օգտին:

Cautio judicatum solvi: Դատական պաշտպանության իրավունքին նվիրված 16-րդ հոդվածի համաձայն՝ սովորական բնակության վայրի պետությունում փախստականը դատարան դիմելու հետ կապված հարցերում օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները, ներառյալ իրավաբանական օգնությունն ու ազատումը **cautio judicatum solvi**-ից: «**Cautio judicatum solvi**»-ն մի շարք երկրներում

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 11-12:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

կիրառվող մեխանիզմ է, որի շրջանակներում օտարերկրյա հայցվորներից պահանջվում է դեպոնացնել մի գումար, որը դատարանի գնահատմամբ բավարար է ծածկելու այն գումարը, որը նա պարտավոր կլինի վճարել հայցի մերժման դեպքում⁹:

Առավելագույնս բարենպաստ վերաբերմունք:

Կոնվենցիայի 17-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավարձով վարձատրվող աշխատանքով զբաղվելու իրավունքի կապակցությամբ պետություններն իրենց տարածքում օրինական կարգով գտնվող փախստականներին ցուցաբերում են առավելագույնս բարեհաճ վերաբերմունք, ինչը նույն հանգամանքներում ցուցաբերվում է օտարերկրացիներին: Տվյալ հոդվածի ընդհանուր համատեքստից բխում է, որ «առավելագույնս բարեհաճ վերաբերմունք» եզրի ուժով փախստականները պետք է ստանան օտարերկրյա պետությունների քաղաքացիներին տրամադրվող լավագույն վերաբերմունքը, թեկուզև բացառության կարգով այն նախատեսված լինի միայն մեկ օտարերկրյա պետության քաղաքացիների համար՝ «ազգերի առավել բարենպաստության մոտեցման» շրջանակներում: Այս եզրը Կոնվենցիայում որևէ այլ երաշխիքի կամ իրավունքի մասով չի օգտագործվում: Աշխատանքի իրավունքի առնչությամբ նման հատուկ վերաբերմունքը պայմանավորված է նրանով, որ պետությունների շահերից է բխում փախստականներին սեփական ապրուստը ինքնուրույն հոգալու հնարավորություններով ապահովելը¹⁰:

Փորձեք նկարագրել, թե ինչ է նշանակում առավելագույնս բարեհաճ վերաբերմունքը:

Այս դասում Ձեզ ներկայացրեցինք փախստականի կարգավիճակի բովանդակությունը: Նշեցինք 1951 թ.

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 38:
¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 42:



Կոնվենցիայով նախատեսված երաշխիքներն ու իրավունքները, քննարկեցինք դրանց ու մարդու իրավունքների միջազգային իրավունքով սահմանված երաշխիքների հարաբերակցությունը, ինչպես նաև անդրադարձանք Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների հետ կապված որոշ հիմնախնդիրների:

Նշումների համար՝

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....



ԲԱՌԱՐԱՆ

Ազգերի առավել բարենպաստության մոտեցում –

Միջազգային իրավունքում, հատկապես Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում կիրառվող սկզբունք: Պարտավորվելով օտարերկրյա անձանց որևէ խմբի նկատմամբ կիրառել այս սկզբունքը՝ պետությունը պարտավորվում է ապահովել, որ այս կամ այն առավելությունը, արտոնությունը կամ բարենպաստությունը, որը տվյալ երկրում տրամադրվում է որևէ երկրի քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց, կտրամադրվի նաև օտարերկրյա անձանց խմբին:

Cautio judicatum solvi – Մի շարք երկրներում կիրառվող դատավարական մեխանիզմ, որի շրջանակներում օտարերկրյա անձի կողմից հայց ներկայացնելու դեպքում դատարանը նրանից պահանջում է դեպոնացնել մի գումար, որը դատարանի գնահատմամբ բավարար կլինի ծածկելու այն ծախսերը, որը նա պարտավոր կլինի վճարել հայցի մերժման դեպքում:



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 10 րոպե

1. A. Edwards, 'Human Rights, Refugees, and the Right "To Enjoy" Asylum', International Journal of Refugee Law, vol. 17, no. 2 (2005), pp. 293-330.
2. UNHCR Commentary on the Refugee Convention 1951 Articles 2-11, 13-37, Published by the Division of International Protection of the United Nations High Commissioner for Refugees, 1997.



Ցուցումներ

Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: